Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թվականի
հունիսի 23-ի N 762 - Ա որոշման

Ն Ե Ր Դ Ր Ո Ւ Մ Ա Յ Ի Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՍՊԱՅԿԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐԱԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ 50 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԻՍԱՓԱԿ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՈՒ ԲՈՐԲՈՍՈՎ ՊԱՆՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

1. Ծրագրով նախատեսվում է Երևանի Նորագավիթ թաղամասում գտնվող ՋԷԿ-ին կից տարածքում կառուցել 50 հեկտար մակերեսով կիսափակ ջերմատնային տնտեսություն և տարեկան 1000 տոննա արտադրողականությամբ բորբոսով պանրի գործարան, որն իր ենթակառուցվածքներով կզբաղեցնի մոտավորապես 76.4 հեկտար տարածք: Առանձին ջերմատները բաժանված են լինելու 5-հեկտարանոց միավորների, որոնք 4 և 6 բլոկներով կմիավորվեն մեկ ընդհանուր տեխնիկական արտադրատարածքով՝ իր տեխնիկական (սառնարանային, տեսակավորման, փաթեթավորման և այլն) և վարչական հատվածով: Պանրի գործարանն առանձնացված է լինելու 4.2 հեկտար հողատարածքի վրա՝ իր առանձին մուտքով և ենթակառուցվածքներով:

2. Երևանի Նորագավիթ թաղամասին հարող տարածքում ջերմատնային գոտու ստեղծման վերաբերյալ որոշման ընդունման համար որոշիչ է եղել Երևանի ՋԷԿ-ի էներգառեսուրսների առկայությունը, որը կարող է ապահովել մինչև 50 հեկտար տարածքով տնտեսության էլեկտրամատակարարումը:

3. Ֆրանսիական «Ռիշել» ընկերության կողմից մշակված կիսափակ պոլիմերային ծածկով ջերմատնային տեխնոլոգիան մրցակցային առավելություն է ապահովում: Ջերմատունը 9,7 մետր բարձրությամբ (գագաթում) մետաղական կոնստրուկցիաների հենքով երկշերտ պոլիէթիլենային թաղանթով կառույց է՝ հագեցած կաթիլային ոռոգման,

ջեռուցման, CO_2-ի ապահովման համակարգերով, ինչպես նաև արհեստական լուսավորման, հովացման և կլիմայի ավտոմատ կառավարման համակարգերով: Մշակաբույսերի մշակությունը կիրականացվի հիդրոպոնիկ եղանակով՝ կոկոսի մանրաթելի սուբստրատի մեջ, որն ամբողջովին օրգանական է և չի աղտոտում շրջակա միջավայրը:

4. Բույսերի բնական փոշոտումը կիրականացվի մեղուների միջոցով, իսկ վնասատուների հսկողությունը ջերմատներում կկազմակերպվի հիմնականում կենսաբանական պաշտպանության միջոցներով, որը թարմ ոռոգման ջրի հետ միասին հնարավորություն կտա ստանալու էկոլոգիապես մաքուր արտադրանք:

5. Ջերմատները նախատեսված կլինեն լոլիկի և այլ մշակաբույսերի մշակության համար: Հաշվի առնելով եվրոպական ջերմատնային տնտեսությունների փորձը և Հայաստանի կլիմայական պայմանները՝ ծրագրով նախատեսվում է բանջարեղենների աճեցումն իրականացնել մեկ ցանքաշրջանով: Բույսերը տնկելով օգոստոս ամսվա կեսերին (50-60 օրական բույսեր)՝ բերքը հնարավոր կլինի ստանալ սեպտեմբեր ամսվանից մինչև հունիս ամսվա վերջն ընկած ժամանակահատվածում. ընդհանուր առմամբ մեկ քառ. մետր տարածքից միջինում հնարավոր կլինի ստանալ տարեկան ավելի քան 60 կիլոգրամ բերք:

6. Պանրի գործարանում կարտադրվի կապույտ բորբոսով պանիր՝ գերմանական առաջատար տեխնոլոգիայով: Ամսական արտադրվելու է ավելի քան 80 տոննա պանիր՝ 1.4 կիլոգրամ և 150 գրամ փաթեթավորմամբ: 2018 թվականին, որպես այս ծրագրի շարունակություն, նախատեսվում է կառուցել ավելի քան 1000 գլխի համար նախատեսված անասնապահական ֆերմա՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում:

7. Ջերմատնային համալիրի 50 հեկտարի կառուցման փուլի համար անհրաժեշտ ներդրումները գնահատվում են մոտավորապես 78 մլն ԱՄՆ-ի դոլար, պանրի գործարանի համար՝ մոտավորապես 8 մլն ԱՄՆ-ի դոլար:

8. Ջերմատնային համալրի շինարարության մեկնարկը նախատեսվում է 2018 թվականի գարնանը, շինարարության ավարտը՝ 2018-2019 թվականներին: 50 հեկտար մակերեսով ջերմատնային համալիրի շահագործմամբ կստեղծվի ավելի քան 600 մշտական աշխատատեղ:

9. Նշված ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է ապահովել մեծածավալ էներգակիրներ, մասնավորապես, արհեստական լուսավորություն՝ մոտավորապես 70/100 ՄՎ հզորությամբ, 30.000 մ^3/ժամում գազամատակարարում, 14.000 մ^3/օրական ջրամատակարարում, 4100 մ^3/ օրական դրենաժ (ջրահեռացման կոյուղի), որոնց համար ստեղծվելու են անհրաժեշտ ենթակառուցվածքներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թվականի
հունիսի 23-ի N 762 - Ա որոշման

Ն Ե Ր Դ Ր Ո Ւ Մ Ա Յ Ի Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԱՐՄՍԱՆՊՐՈԴԱԿՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐԱԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ 60 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԻՍԱՓԱԿ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

1. Ծրագրով նախատեսվում է Երևանի Նորագավիթ թաղամասում գտնվող ՋԷԿ-ին կից տարածքում կառուցել 60 հեկտար մակերեսով կիսափակ ջերմատնային տնտեսություն, որն իր ենթակառուցվածքներով կզբաղեցնի մոտավորապես 86.8 հեկտար տարածք: Առանձին ջերմատները բաժանված են լինելու 5-հեկտարանոց միավորների, որոնք 4 և 6 բլոկներով կմիավորվեն մեկ ընդհանուր տեխնիկական արտադրատարածքով՝ իր տեխնիկական (սառնարանային, տեսակավորման, փաթեթավորման և այլն) և վարչական հատվածով:

2. Երևանի Նորագավիթ թաղամասին հարող տարածքում ջերմատնային գոտու ստեղծման վերաբերյալ որոշման ընդունման համար որոշիչ է եղել Երևանի ՋԷԿ-ի էներգառեսուրսների առկայությունը, որը կարող է ապահովել մինչև 60 հեկտար տարածքով տնտեսության էլեկտրամատակարարումը:

3. Ֆրանսիական «Ռիշել» ընկերության կողմից մշակված կիսափակ պոլիմերային ծածկով ջերմատնային տեխնոլոգիան մրցակցային առավելություն է ապահովում: Ջերմատունը 9,7 մետր բարձրությամբ (գագաթում) մետաղական կոնստրուկցիաների հենքով երկշերտ պոլիէթիլենային թաղանթով կառույց է՝ հագեցած կաթիլային ոռոգման, ջեռուցման, CO_2-ի ապահովման համակարգերով, ինչպես նաև արհեստական լուսավորման, հովացման և կլիմայի ավտոմատ կառավարման համակարգերով: Մշակաբույսերի մշա-

կությունը կիրականացվի հիդրոպոնիկ եղանակով՝ կոկոսի մանրաթելի սուբստրատի մեջ, որն ամբողջովին օրգանական է և չի աղտոտում շրջակա միջավայրը:

4. Բույսերի բնական փոշոտումը կիրականացվի մեղուների միջոցով, իսկ վնասատուների հսկողությունը ջերմատներում կկազմակերպվի հիմնականում կենսաբանական պաշտպանության միջոցներով, որը թարմ ոռոգման ջրի հետ միասին հնարավորություն կտա ստանալու էկոլոգիապես մաքուր արտադրանք:

5. Ջերմատները նախատեսված կլինեն լոլիկի և այլ մշակաբույսերի մշակության համար: Հաշվի առնելով եվրոպական ջերմատնային տնտեսությունների փորձը և Հայաստանի կլիմայական պայմանները՝ ծրագրով նախատեսվում է բանջարեղենների աճեցումն իրականացնել մեկ ցանքաշրջանով: Բույսերը տնկելով օգոստոս ամսվա կեսերին (50-60 օրական բույսեր)՝ բերքը հնարավոր կլինի ստանալ սեպտեմբեր ամսվանից մինչև հունիս ամսվա վերջն ընկած ժամանակահատվածում. ընդհանուր առմամբ մեկ քառ. մետր տարածքից միջինում հնարավոր կլինի ստանալ տարեկան ավելի քան 60 կիլոգրամ բերք:

6. Ջերմատնային համալիրի 60 հեկտարի կառուցման փուլի համար անհրաժեշտ ներդրումները գնահատվում են մոտավորապես 133 մլն ԱՄՆ-ի դոլար:

7. Ջերմատնային համալիրի առաջին փուլի մեկնարկը նախատեսվում է 2017 թվականի աշնանը, շինարարության ավարտը՝ 2018 թվականի ամռանը: 60 հեկտար մակերեսով ջերմատնային համալիրի շահագործմամբ կստեղծվի ավելի քան 700 մշտական աշխատատեղ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2017 թվականի
հունիսի 23-ի N 762 - Ա որոշման

Ս Խ Ե Մ Ա

ՆՈՐԱԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՍՊԱՅԿԱ» ԵՎ «ԱՐՄՍԱՆ-ՊՐՈԴԱԿՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ
(163.2 հեկտար)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

17_762